

Աստուածամայրին Աղերսանք

Ով Մարիամ, իմ նեղութեանս վարկեաններուն պաշտպանս եղիր, եւ վիշտերուս մեջ մխիթարիչս, քու երկրպաքելի Որդւոյդ առջեւ ալ իմ փաստաբանս: Ով բարի Մայր, պահէ զիս ամէն մահուաչափ ու ներելի մեղքերէ, յանկարծական մահուրնէ եւ ամէն տեսակ վտանգներէ: Ամէն:

Յիշէ՛ Ո՛վ Ամենագութ Մարիամ

Յիշէ՛, ով ամենագութ կոյս Մարիամ, որ երբէք չէ լսուած, թէ մէկը պաշտպանութեանդ դիմած ըլլայ, կամ օգնութիւնդ խնդրած, եւ կամ բարեխօսութիւնդ հայցած եւ անտեսած ըլլայ: Այսպիսի վստահութեամ քաջալերուած, կը վազեմ դէպի քեզ, ով կոյս կոյսերու եւ Մայր իմ մեղքերուս բեռնն տակ ընկճուած ոտքդ կ'իյնամ: Մայրն Աստուծոյ, մի անտեսէր աղօթքներս, այլ լսէ բարութեամբ եւ հաճէ կատարել: Ամէն:

Յիշէ՛ Աղօթք Սուրբ Յովսէփի

Ո՛վ պաշտելի եւ Հայր կոյսերու՝ Սուրբ Յովսէփ, որու հաւատարիմ պաշտպանութեան յանձուեցան ինքնին անմեղութիւնը Յիսուս եւ կոյսերու Կոյսը Մարիամ: Այս երկու պաշտպանեալներուդ սիրոյն համար կը խնդրեմ քեզմէ, որ ազատ պահես զիս ամէն աղտոտութիւնէ, եւ այնպէս ընես որ մաքուր մտքով, սուրբ սիրով, եւ կոյս մարմինով, ծառայեմ Յիսուսի եւ Մարեամի եւ հասնիմ երկինքի արքայութեան: Ամէն:

Աղօթք Առ Պահապան Հրեշտակի

Ով իմ պահապան հրեշտակս, սիրելի բարեկամս, հաւատարիմ եւ ապահով առաջնորդէ կ'աղաչեմ լուսաւորէ՛, պաշտպանէ՛, ուղղէ՛ եւ կառավարէ՛ զիս: Ամէն:

Ըսել 7 անգամ Փառք Հօր քու պահապան հրեշտակիդ եւ 7 անգամ Փառք Հօր ի պատիւ Սուրբ Հոգւոյն, որպէսզի հոգիդ ողողէ Սուրբ Հոգին: Ամէն